Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջան

Գնահատականների զեկույցի, չափանիշների վրա հիմնված գնահատման և ամբողջական գիտելիքների (DOK) մակարդակների ուղեցույց ծնողների համար

GUSD-ի հարգելի ծնողներ և խնամակալներ՝

Աշակերտի առաջընթացի վերաբերյալ հաղորդակցումը տան և դպրոցի միջև կապի մեր շարունակական պարտավորության կարևոր մասնիկն է: Մեր նպատակն է տրամադրել դասարանի մակարդակի ուսուցողական և սոցիալ չափորոշիչներին համապատասխան աշակերտի կատարման և առաջընթացի առավել ճշգրիտ արտացոլումը: Այս ուղեցույցը կազմվել է, որպեսզի կարևոր տեղեկություն տրամադրի ծնողներին: Այս ուղեցույցը կբացատրի հետևյալը՝

- Կալիֆորնիա պետական չափորոշիչները (CSS)
- Չափորոշիչների վրա հիմնված գնահատում
- Ինչպես է գնահատվում աշակերտի գիտելիքները
- Գիտելիքների խորության (DOK) մակարդակները
- Գնահատականների զեկույցներ
- Ուսումնական առաջադիմության մակարդակները

Կալիֆորնիայի պետական չափորոշիչներ

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը շարունակում է լիովին կիրառել Կալիֆորնիայի պետական չափորոշիչները (CSS), որ աջակցում են խնամքի, վստահության և վերլուծության ուսումնական միջավայրը: Կալիֆորնիան ընդունել է այս բարձրորակ չափորոշիչները՝ Միացյալ Նահանգների երեխաների համար հետևողական եւ հարուստ կրթություն ապահովելու համազգային շարժման հետ համատեղ: Անհրաժեշտ է հասկանալ, որ այս չափորոշիչները փոխել են ուսուցիչների ուսուցումը, թե ինչպես և ինչ են սովորում աշակերտները և գաղափարների և հմտությունների խորությունը, որ աշակերտը ցուցադրում է, երբ հմտանում է դրանց մեջ: CSS-ը տրամադրում է այն հմտությունների և գաղափարների կայուն և հստակ հասկացողությունը, որն աշակերտներից ակնկալվում է սովորել, հետևաբար, ուսուցիչներն ու ծնողները գիտեն, թե ինչ պետք է անեն, որպեսզի աջակցեն դրան: CSS-ը կառուցված է խնամքով՝ կիրառելով ապացույցների վրա հիմնված հետազոտություններ քոլեջի եւ կարիերայի համար պատրաստ աշակերտների համար, որոնք կդառնան 21-րդ դարի համաշխարհային առումով մրցունակ անհատներ: CSS-ը պահանջում է աշակերտներին ներգրավվել տարբեր տեսակի ընթերցանության, գրելու, խնդիրների լուծման, խոսելու եւ լսելու կատարողական

առաջադրանքներին: CSS-ը կենտրոնանում է աշակերտների դատողության դյուրացման վրա, որը ներառում է ապացույցների վրա հիմնված փաստարկներ եւ այլ մարդկանց տրամաբանության վերլուծումը:

Չափորոշիչների վրա հիմնված գնահատում

Չափորոշիչների վրա հիմնված գնահատումը գնահատում է դասարանի մակարդակի չափորոշիչների տիրապետման մակարդակը՝ առաջնահերթություն տալով իրենց կատարման վերջին և կայուն մակարդակին: Հետևաբար, եռամսյակի սկզբին դժվարություններ ունեցող աշակերտը կարող է չափորիշիչների հմտություն ցուցաբերել եռամսյակի գնահատման ժամանակաշրջանի ավարտին: 4 միավորանի գնահատման համակարգը չի կարող համեմատվել ավանդական A-F գնահատման համակարգի հետ: Չափորոշիչների վրա հիմնված գնահատման արդյունքում ի հայտ է գալիս, թե արդյոք աշակերտը բավարարում է չափորոշիչները կոնկրետ որևէ չափով տարվա ընթացքում: Չափորոշիչների վրա հիմնված գնահատման գնահատականների զեկույցում «3» սպասվելիք արդյունքն է աշակերտի համար, որը նշանակում է, որ աշակերտը բավարարում է իր դասարանի մակարդակի ուսումնական չափորոշիչները: «3» և «2» գնահատականները նշանակում են, որ աշակերտը արդարացնում է իր դասարանի մակարդակի սպասելիքները: Տարբերությունը անկախ լինելու մակարդակն է և այն աջակցությունը, որի կարիքն աշակերտը զգում է հմտության հասնելու համար: Նպատակն այն է, որ յուրաքանչյուր տարվա ավարտին աշակերտը նշավազույզը «3» գնահատականը ստանա իր դասարանի մակարդակին հավասար: «4» գանահատական ստանալը չի նշանակում, թե ինչքան ավել աշակերտը գիտի, այլ՝ ինչ գիտի նա և թե ինչպես է նա կարողանում կիրառել իր գիտելիքները նոր և ավելի բարձր մակարդակի իրավիճակներում, որը գերազանցում է այն ամենը, ինչ ուսուցանվում է դասարանում:

Ի՞նչպես է գնահատվում աշակերտի գիտելիքները

Քննությունները գնահատվում են այն հարցերի մակարդակով, որոնց աշակերտը պետք է պատասխանի: Եթե քննությունից աշակերտը ստանում է 100%, դա կարող է նշանակել «3» գնահատականը, եթե այն գնահատում է պարզ մակարդակով, ինչպես օրինակ՝ աշակերտից պահանջվում է կիրառել միայն հիմնական հմտություններն ու գաղափարները: Որպեսզի աշակերտը քննությունից ստանա «4» գնահատականը, պետք է բազմազան հարցեր լինեն, որոնք ներառում են հիշողություն, հմտություններ և լայնաբովանդակ մտածողություն և տրամաբանություն: Օրինակ, հնարավորություն պետք է լինի, որպեսզի աշակերտները կարողանան բացատրել իրենց հասկացողությունը ավելի խորը իմացական կամ կիրառման մակարդակով: «4» գնահատականը ստանալու համար, աշակերտները պետք է վերլուծեն կամ բարդ իրավիճակներից որոշումներ գտնեն, օրինակ՝ պետք է բացատրեն, թե ինչպես կարող են իրենց սովորածը պատկերել գրաֆիկի, աղյուսակի կամ օրինակի վրա: Քննությունների հարցերը հավասարեցնում են իրենց **գիտելիքների խորությանը (DOK)** կամ իմացական տրամաբանության մակարդակին:

Ի՞նչ են նշանակում գիտելիքների խորության (DOK) մակարդակները

Գիտելիքների խորությունը բնութագրվում է որպես հասկացական պահանջ կամ մտավոր աշխատանք, որը պահանջվում է կոնկրետ հանձնարարության համար: Կոնկրետ թեմայի DOK մակարդակը բնորոշվում է հանձնարարությամբ, այլ ոչ թե աշակերտի դասարանի մակարդակով կամ կարողությամբ: DOK 1 մակարդակի քննությունները սովորաբար պահանջում են, որպեսզի աշակերտները միայն **հիշեն** տեղեկությունը: DOK 2 մակարդակի հարցերը պահանջում են, որպեսզի աշակերտները կարողանան կիրառել որոշակի **հմտությունների** մակարդակ, ինչպես օրինակ՝ օրինակներ բերելը, ամփոփելը կամ ընթացակարգը ամենօրյա խնդրի հանդեպ կիրառելը: Եթե գնահատումը ներառում է DOK 1 կամ 2 մակարդակի հարցեր, աշակերտները ցուցաբերում են հիմնական հասկացական մակարդակի հասկացողություն: DOK 3 մակարդակի հարցերը պահանջում են, որպեսզի աշակերտները կիրառեն **մարտավարական տրամաբանություն**, բացատրություններ տան և կիրառեն տեղեկատվությունը այլ իրավիճակներում: Վերջապես, DOK 4 մակարդակի հարցերը պահանջում են այն տեղեկությունը, որը պետք է կիրառվի բարդ խնդիրների դեպքում: Եթե գնահատումը պարունակում է հարցեր DOK 1 կամ 2 մակարդակի հարցեր, ապա հնարավոր ամենաբարձր գնահատականը կարող է լինել 3-ը:

Եթե աշակերտը 100% է ստանում հանձնարարության կամ գնահատման արդյունքում, չի նշանակում, որ գնահատականը պետք է միանգամից 4 լինի: Հանձնարարությունների և հարցերի DOK մակարդակները պետք է հաշվի առնվեն՝ աշակերտի աշխատանքը գնահատելիս:

Webb գիտելիքների խորությունը

DOK մակարդակ 1
(հիշել)
Բայեր – դասավորել, հաշվարկել, սահմանել, գծել, հայտնաբերել, թվարկել, անվանել, լուսաբանել, համապատասխանեցնել, հիշել, ճանաչել, պատմել: ...
Կենտրոնանալ – կոնկրետ փաստերի, սահմանումների, մանրամասների կամ գործընթացների վրա:
Նկատառում – կա մեկ ճիշտ պատասխան, և մակարդակ 1-ի համադրությունը չի դարձնում այն մակարդակ 2:

DOK մակարդակ 2
(հմտություն/գաղափար)
Բայեր – դասակարգել, պատճառ/հետևանք, համեմատել, տարբերակել, գնահատել, գծագրել, մեկնաբանել, փոփոխել, կանխատեսել, վերագրել, ցույց տալ, ամփոփել:…
Կենտրոնանալ – հմտությունները և գաղափարները կիրառելու վրա, բացատրել՝ ինչպե՞ս և ինչու՞:
Նկատառում – կա մեկ ճիշտ պատասխան

DOK մակարդակ 3
(ստրատեգիական մտածելակերպ)
Բայեր – գնահատել, մեջբերել փաստեր, համեմատել, եզրակացնել, կազմել, վերլուծել, զարգացնել տրամաբանական փաստարկներ, տարբերակել, կազմավորել, վարկածներ բերել, ուսումնասիրել, վերանայել: …..
Կենտրոնանալ – տրամաբանելու և ծրագրելու վրա՝ պատասխանելու համար, անհրաժեշտ է բազմաշերտ և վերացական տրամաբանություն, պաշտպանել տրամաբանությունը և եզրակացությունները:

DOK մակարդակ 4
(ընդլայնված տրամաբանություն)
Բայեր – կիրառել գաղափարներ, վերլուծել, կապակցել, ստեղծել, քննադատել, նախագծել, ապացուցել: …
Կենտրոնանալ – բազմաշերտ մտածելակերպի, ծրագրման և տրամաբանելու վրա, կիրառել իրական կյանքի գործադրումները նոր իրավիճակներում:
Նկատառում – ունի մի քանի պատասխան կամ մոտեցում, հաճախ պահանջում է ընդլայնված ժամանակ՝ մի քանի քայլերով:

Ինչպե՞ս կարող եք հասկանալ գնահատականների զեկույցը

Student: **Stu #:**

Teacher: **Grade:** KN

Academic Achievement Levels E/LA = English Language Arts				
4 - Thorough	3 - Proficient	2 - Partial	1 - Minimal	* - Addressed in Student IEP

Effort, Work Habits, and Behavior Expectations		
S - Satisfies Expectations	N - Needs Improvement	N/A - Not Applicable

Marking Terms		
1st Trimester	2nd Trimester	3rd Trimester

English Language Proficiency
English Only

Attendance	1st Trimester	2nd Trimester	3rd Trimester	Total
Days Absent				
Days Tardy				

Kindergarten Standards	1st Tri	2nd Tri	3rd Tri
LANGUAGE ARTS:			
READING	E/LA	E/LA	E/LA
Reading Foundational Skills			
Reading Literature and Informational Text			
WRITING			
LANGUAGE			
SPEAKING AND LISTENING			
Language Arts Effort			
ENGLISH LANGUAGE DEVELOPMENT - (ELL Students Only)			
English Language Development Effort			
MATHEMATICS			
Mathematics Effort			
HISTORY/SOCIAL SCIENCE			
History/Social Science Effort			
SCIENCE			
Science Effort			

Այս բաժինը տեղեկություններ է պարունակում ուսուցչի, աշակերտի և գնահատականի վերաբերյալ:

Այս բաժինը սահմանում է ուսումնական առաջադիմության մակարդակները: Ուսումնական առաջադիմության մակարդակների մասին հավելյալ տեղեկություններ կան 6-րդ էջում:

Այս բաժինը բացատրում է, թե ինչ են աշխատելու ձևի/վարքի նշանները նշանակում:

Ձեր երեխայի ELD-ի հմտության մակարդակը նշվելու է այստեղ: Հավելյալ տեղեկությունների ծանոթացեք 7-րդ էջում:

Այս բաժինը տեղեկություններ է պարունակում հաճախումների վերաբերյալ՝ ներառյալ բացակայությունների և ուշացումների քանակը:

Լեզվի առարկայի համար, աշակերտները կստանան 5 տարբեր ուսումնական հմտության գնահատականներ և 1 գնահատական ջանքի համար:

Այս բաժինը վերաբերում է միայն ELD աշակերտներին: Հավելյալ տեղեկությունների ծանոթացեք 7-րդ էջում:

Մաթեմատիկայի, գիտության և հասարակագիտության առարկաների համար աշակերտները կստանան 1 ուսումնական առաջադիմության գնահատական և 1 գնահատական ջանքի համար:

Standards-Based Report of Student Achievement

Trimester

Kindergarten Standards	1st Tri	2nd Tri	3rd Tri
EFFORT			
Physical Education Participation			
Physical Education Behavior			
Digital Literacy			
Visual and Performing Arts			
WORK HABITS & BEHAVIOR EXPECTATIONS	E/LA	E/LA	E/LA
The student is responsible for his/her own learning			
• Listens and follows directions			
• Makes productive use of class time			
• Works independently and asks for help when needed			
• Exhibits self-control			
The student understands that it is essential for people to work together			
• Respects students, adults, and property			
• Follows school and classroom rules			
• Participates collaboratively			
The student demonstrates critical thinking and problem solving strategies			
• Explains answers and adjusts thinking as needed			
• Solves problems in various ways			
The student recognizes and produces quality performance and quality products			
• Completes work, including homework, neatly, correctly, and on time			
The student communicates effectively			
• Expresses thoughts, feelings, and ideas clearly			
• Listens attentively to others			
The student uses a variety of resources effectively and ethically			
• Draws upon multiple resources to produce quality products			
• Organizes and uses resources responsibly			

Աշակերտները կստանան S, N, կամ N/A ջանքի, աշխատելաոճի և վարքի սպասելիքների համար:

Ձեր երեխայի առաջընթացի վերաբերյալ կոնկրետ մեկնաբանությունները գնահատականների զեկույցի երրորդ սյունակում է:

School:

Year:

Kindergarten Standards	1st Tri	2nd Tri	3rd Tri
MOTOR SKILLS			
[B-Beginning, D-Developing, S-Secure]			
Fine Motor Skills [For example, cuts with scissors, grips pencil, draws with detail)			
Gross Motor Skills (For example, skips, jumps, throws ball, bounces ball)			

Աշակերտները կստանան B, D կամ S գնահատականները մկանային հմտությունների համար: Հավելյալ տեղեկությունների ծանոթացեք 7-րդ էջում:

4 – Չափորոշիչների վերաբերյալ խորը գիտելիքները և դրանց կիրառումը

▪ Աշակերտի կատարողականությունը ցուցաբերում է հմտությունների, գաղափարների խորը հասկացողությունը և դրանց կիրառումը:

▪ Աշակերտը ինքնուրույն կիրառում է հմտություններ, գաղափարներ և դրանց գործածումը՝ իրական կյանքի խնդիրներ լուծելու համար:

▪ Աշակերտը ստանում է «4» գնահատականը, եթե նա դարձել է հմուտ և կարող է կիրառել դրանք բարդ իրավիճակներում:

▪ Աշակերտը ստանում է «4» գնահատականը, եթե նա կիրառում է մի շարք հմտություններ և գաղափարներ, որպեսզի լուծումներ գտնի և կարողանա բացատրել և/կամ արդարացնել դրանց լուծումները:

3 – Չափորոշիչների վերաբերյալ հմուտ գիտելիքները և դրանց կիրառումը

▪ Աշակերտի կատարողականությունը ցուցաբերում է հմտությունների, գաղափարների հմուտ հասկացողությունը և դրանց կիրառումը:

▪ Աշակերտը ինքնուրույն կիրառում է հմտություններ, գաղափարներ և դրանց գործածումը՝ իրական կյանքի խնդիրներ լուծելու համար:

▪ Աշակերտը ստանում է «4» գնահատականը, եթե նա դարձել է հմուտ և կարող է կիրառել դրանք բարդ իրավիճակներում:

2 – Չափորոշիչների վերաբերյալ մասնակի գիտելիքներ և դրանց կիրառումը

▪ Աշակերտի կատարողականությունը ցուցաբերում է հմտությունների, գաղափարների մասնակի հասկացողությունը և դրանց կիրառումը:

▪ Աշակերտը աջակցությամբ կիրառում է հմտություններ, գաղափարներ և դրանց գործածումը՝ իրական կյանքի խնդիրներ լուծելու համար:

▪ Աշակերտը առաջընթաց ունի գիտելիքների մեջ, սակայն դեռ չի հմտացել:

▪ Աշակերտը ստանում է «2» գնահատականը եթե նա հմտացել է ամբողջապես կամ մասնակիորեն, սակայն չի կարողանում կիրառել այդ հմտությունները առանց օգնության:

1 – Չափորոշիչների վերաբերյալ նվազագույն գիտելիքներ և դրանց կիրառումը

▪ Աշակերտի կատարողականությունը չի ցուցաբերում ուսուցանված հմտությունների և գաղափարների իմացությունը:

▪ Աշակերտը, անգամ օգնությամբ, դժվարանում է գործածել հմտությունները, գաղափարները և դրանց կիրառումը՝ խնդիրներ լուծելու համար:

▪ Աշակերտը շարունակական/լրացուցիչ օգնության կարիք ունի. դժվարանում է անգամ օգնություն ստանալով:

N/A – Չափորոշիչը չի գնահատվել այս եռամսյակում:

(*) – Վերաբերում է IEP նպատակներին:

Անգլերեն լեզվի զարգացման մակարդակները և գնահատումը

Անգլերեն լեզվի հմտության մակարդակները հիմնված են աշակերտի ELPAC քննության (Կալիֆորնիայի անգլերեն լեզվի հմտության գնահատումներ) կատարման վրա: Ձեր երեխայի մակարդակը գնահատականների զեկույցի անգլերեն լեզվի հմտություն բաժնում է: Մակարդակներից յուրաքանչյուրի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են ստորև՝

Նախնական անգլերեն լեզվի հմտության մակարդակներ (անգլերեն լեզու սովորող աշակերտների համար, ովքեր նոր են Կալիոֆորնիայի դպրոցներում):
•**Նախնական վարժ մակարդակի անգլերենի հմտություն (IFEP) -** Այս մակարդակում աշակերտներն ունեն լավ զարգացած անգլերեն լեզվի բանավոր և գրավոր հմտություններ: Աշակերտները չեն ստանում անգլերեն լեզվի զարգացման գնահատական:

•**Նախապես սկսնակ մակարդակի անգլերեն լեզու սովորող –** Այս մակարդակում աշակերտներն ունեն նվազագույն զարգացած անգլերեն լեզվի բանավոր և գրավոր հմտություններ:

•**Նախապես միջին մակարդակի անգլերեն լեզու սովորող -** Այս մակարդակում աշակերտներն ունեն միջին զարգացած անգլերեն լեզվի բանավոր և գրավոր հմտություններ:

Անգլերեն լեզվի հմտության մակարդակներ (անգլերեն լեզու սովորողների համար, ովքեր նախկինում արձանագրված են եղել Կալիֆորնիայի դպրոցում)
•**Մակարդակ 1 սկսնակ –** Այս մակարդակում աշակերտները սովորաբար արագ առաջընթաց են ունենում, սովորում են կիրառել անգլերեն լեզուն իրենց կարիքների համար, ինչպես նաև սկսում են հասկանալ և կիրառել ուսումնական բառապաշարը:

•**Մակարդակ 2 կամ 3 – ընդլայնվող –** Այս մակարդակում աշակերտները բարելավում են իրենց անգլերեն լեզվի հմտությունները ավելի լայն համատեքստերում, սովորում են բառապաշարը և լեզվի կառուցվածքը, և կիրառում են իրենց զարգացող լեզվի հմտություններն ավելի կատարելագործված՝ իրենց տարիքի և դասարանի մակարդակին համապատասխան:

•**Մակարդակ 3 կամ 4 – անցումային –** Այս մակարդակում աշակերտները շարունակում են սովորել և կիրառել բարձր մակարդակի անգլերեն լեզվի հմտություններ լայնածավալ համատեքստերում, ներառյալ՝ հասկացողությունը, գրելը և խոսելը: Աշակերտներն ամբողջովին ներգրավված են իրենց դասարանի մակարդակին համապատասխան հանձնարարություններում:

ELPAC-ի մակարդակներ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Մակարդակ 4
ELD-ի չափորոշիչներ Հմտության մակարդակներ	**Սկսնակ —** Ստանում է լեզվի հսկայական աջակցություն	**Ընդլայնվող—** Ստանում է միջին մակարդակի լեզվի օգնություն	**Անցումային—**Ստանում է թեթև մակարդակի լեզվի օգնություն	

Անգլերեն լեզվի զարգացման (ELD) ծրագրերի և գնահատականների մասին տեղեկացվածություն
Անգլերեն լեզվի հմտություն ծրագրից բացի, աշակերտները լինում են նաև մեկ այլ ծրագրում (տես ներքևի աղյուսակում): ELD-ի գնահատականը արտացոլում է աշակերտի առաջադիմությունն ու ուսումնական առաջընթացը իրենց ծրագրի և անգլերեն լեզվի հմտության դասակարգման մեջ:

Ծրագիր	Մակարդակ (ընդհանուր)	Նկարագրություն	Գնահատված ոլորտներ	Չգնահատված ոլորտներ
Դասակարգված անգլերենի ներգրավվածություն (Ծրագիր 1)	Նախնական - Սկսնակ Մակարդակ 1 – սկսնակ	Անգլերեն լեզվի ընկալման ծրագիր այն աշակերտների համար, ովքեր անգլերենի սահմանափակ գիտելիքներ ունեն	ELD, մաթեմատիկա, գիտություն և սոցիալական գիտություններ	ELA
Անգլերեն լեզվի հիմնուղի (Ծրագիր 2)	Նախնական - Միջին Մակարդակ 2-3- Ընդլայնվող Մակարդակ 3-4 - Անցումային	Անգլերեն լեզվի ընկալման ծրագիր այն աշակերտների համար, ովքեր խելամիտ հմտություն ունեն անգլերեն լեզվի մեջ:	ELD, ELA, մաթեմատիկա, գիտություն և սոցիալական գիտություններ	Առկա չէ

<u>Ցուցաբերած ջանքերի վերաբերյալ բացատրությունը</u>

Ջանքը, աշխատանքային սովորությունները և վարքի սպասելիքները
S – Արդարացնում է սպասելիքները

N – Առաջընթացի կարիք ունի

«Ջանքը, աշխատանքային սովորությունները և վարքի սպասելիքները» բաժնի գնահատականները հիմնված են ուսուցչի սպասելիքների վրա և դրանց մասին տեղեկացվում է ծնողներին և ուսուցիչներին ուսումնական տարվա սկզբին և դրա ընթացքում:

Ուսումնական ոլորտների «ջանքի» (Effort) գնահատականները արտացոլում են ջանքը՝ չափորոշիչների հմտության ուղղությամբ

Աշխատանքային սովորությունների և վարքի սպասելիքների, ինչպես նաև մարմնամարզության, թվային գրագիտության և տեսողական ու կատարողական

արվեստի համար աշակերտները ստանում են **միայն** գնահատականներ գործադրված **ջանքի** համար (effort only): Գործադրված ջանքի համար ստացված գնահատականները արտացոլում են աշակետի վերաբերմունքը դպրոցի ուսանելու հանդեպ և նրա զարգացումը որպես 21-րդ դարի սովորող՝ հաղորդակցության, համագործակցության, ստեղծագործ մտքի և տրամաբանության ոլորտներում:

Տնային հանձնարարություններ **կատարելը** արտացոլվում է ցուցաբերած ջանքի վերաբերյալ գնահատականի հատվածում, այլ ոչ թե յուրաքանչյուր առարկայի ուսումնական բաժնում:

Մանկապարտեզի աշակերտների «մկանային հմտությունների» սահմանումներ

B – Սկսում է զարգացնել հմտությունները

D – Զարգացնում է հմտությունները

S – Զարգացրել է հմտությունները

ՄԿԱՆԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ – Ձեռքի մատների մկանների հմտություններ (օրինակ՝ կտրում է մկրատով, բռնում է մատիտը, նկարում է մանրամասնություններով): Ոտքի ու ձեռքի մկանների հմտություններ (օրինակ՝ ցատկում է, թռչկոտում, նետում է գնդակը, գետնին է խփում գնդակը):

Հույսով ենք, որ այս տեղեկությունները օգտակար են ձեզ համար: Խնդրում ենք կապ հաստատել ձեր երեխայի ուսուցչի հետ, եթե որևէ հարցեր կամ մեկնաբանություններ ունեք: